ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

01-ը սեպտեմբերի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Սեպտեմբերի 1-ի՝
Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ

Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ, հարգելի՛ մանկավարժներ.
Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ Սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ:
Օրը տոնական ու հիշարժան է հատկապես առաջին դասարանցիների և բարձրագույն ուսումնական հաստատություններ մուտք գործող առաջին կուրսեցիների համար. շնորհավորում եմ ձեզ և ձեր ընտանիքներին. բարի երթ և հաջողություններ եմ մաղթում գիտելիքների մեծ ու հարուստ աշխարհում:
Ուսումնական տարվա մեկնարկին առանձնահատուկ ուզում եմ անդրադառնալ Աբովյանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մարզակրթական, կրթամշակութային և նախադպրոցական կրթական հաստատություններին, որտեղ որակյալ ուսումնական և հարմարավետ կենցաղային պայմանների ապահովման ուղղությամբ տարեցտարի հետևողական աշխատանքներ են կատարվում: Հաշվի առնելով համայնքի պահանջարկը՝ քայլեր են ձեռնարկվում նաև բնակավայրերում մանկապարտեզներ բացելու ուղղությամբ. արդեն իսկ այս տարվանից շահագործվում է Վերին Պտղնիի մանկապարտեզը, կահավորման փուլում է Գեղաշենի մանկապարտեզի նորակառույց մասնաշենքը, ընթացքի մեջ են նաև Բալահովիտ բնակավայրում մանկապարտեզի կառուցման աշխատանքները: Համայնքի ՀՈԱԿ-ներում ոլորտի բարելավմանն ուղղված աշխատանքներն իմ անմիջական ուշադրությամբ շարունակական բնույթ են կրելու:
Լիահույս եմ, որ համատեղ ջանքերով համայնքի բոլոր ուսհաստատություններում կկարողանանք ստեղծել ժամանակի պահանջներին համապատասխան ուսումնական միջավայր և դաստիարակել բարեկիրթ ու աշխատասեր սերունդներ:
Սիրելի՛ աշակերտներ, ուսուցիչներ, կրթության ոլորտի հարգելի՛ ներկայացուցիչներ. Կրկին շնորհավորում եմ Գիտելիքի և դպրության օրվա առիթով: 2024-2025 ուսումնական տարեշրջանում մաղթում եմ բարձր առաջադիմություն, մասնագիտական վերելքներ և անխափան ուսումնական գործընթաց բոլոր կրթօջախներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ